մեանցից չեն զանազանվում աշխարհը կառավարելու ձևումը. այդ ձևը կամայականութիւն, բռնութիւն, ահ ու սարսափն է։ Ճշմարիտ որ չարագործութիւնները պատժվում են, բայց առաքինութիւնը աւելի շատ է վտանգվում։ Գողերին, աւազակներին կտրում են, յանցանքի ծանրութեան համեմատ, քիթը, ականջները, ձեռները, աւելի ծանր յանցաւորներին, գլուխը։ Սպանուածի արիւնը, ինչպէս Տաճկաստանում, պահանջվում է սպանողից կամ արիւնով, կամ դրամով բայց այդ օրէնքների արդար գործադրութիւնը կախուած է խանի միահեծան անձնաւորութիւնից, նորա իւր ստորադրեալների վերայ ունեցած իւր հայեացքից, մինչև անգամ նորա լաւ կամ վատ տրամադրութիւնից։ Շատ անգամ աւազակները պատժվելու տեղ վարձատրվում են, նայեած թէ գործը խանին ինչ տստիճանի շահաբեր է։ Եթէ աւազակութիւնը կատարվում է թշնամի մարդու տան, ստացուածքի վերայ, կամ սահմանից դուրսը, այն ժամանակ դա աւազակութիւն չէ անուանվում այլ քաջութիւն *)։

---

*) Ես Մագուայ մէջ տեսայ ամեն կողմից ժողովուած աւազակների մի խումբ, որոնցից մի քանիսը խաների սպասաւորութեան մէջ էին մտել։ Դրա յայտնի պատրաստվում էին Ռուսաց սահմանի վերայ արշաւելու։ Կոզակների արթնութիւնը արգելեց դրանց իւրեանց նպա-